

2.3. ՀՀ պետական պարտք (ներքին և արտաքին)¹

Ըստ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության նախնական տվյալների, ՀՀ պետական պարտքը (ներքին և արտաքին) 31.12.2000թ. դրությամբ կազմել է 503962,66 մլն. դրամ, որից ներքին պարտքը (պետական կարճաժամկետ պարտատոմսեր և ՀՀ ԿԲ վարկեր) կազմել է 29794,65 մլն. դրամ, իսկ արտաքինը (տրամադրված վարկեր՝ ՀՀ կառավարությանը, ՀՀ ԿԲ-ին և ՀՀ կառավարության ու ՀՀ ԿԲ-ի երաշխիքներով) 474168,01² մլն. դրամ կամ 858,720 մլն. ԱՄՆ դոլար:

Ներքին պարտք

2000թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ են գտնվել 16522,26 մլն. դրամի պետական կարճաժամկետ պարտատոմսեր և 6272,39 մլն. դրամի միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսեր, ինչը կազմել է ընդամենը 22794,65 մլն. դրամ և 1999թ. դեկտեմբերի 31-ի համեմատ նվազել 383,94 մլն. դրամով կամ 1,7%-ով:

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի կառուցվածքն ըստ ժամկետայնության

(մլն. դրամ)

	1-10 շաբաթ	11-20 շաբաթ	21-30 շաբաթ	31-40 շաբաթ	41-52 շաբաթ	1-2 տարի	Ընդամենը
31.12.1999թ.	518.80	4103.90	9649.07	5314.17	3592.65	-	23178.59
31.03.2000թ.	-	3250,00	11350,00	4318,56	3007,10	2000,00	23925,66
30.06.2000թ.	-	4050.00	8465.14	3843.21	4507.10	5000.00	25865.45
30.09.2000թ.	-	1300.00	5919.14	5000.00	5700.00	6572.39	24491.53
31.12.2000թ.	100.00	820.55	4467.97	5233.74	5900.00	6272.39	22794.65

ՀՀ Կենտրոնական բանկի վարկային գծի վերաձևակերպման արդյունքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը տրամադրված արժեկտրոնային պարտատոմսերի ծավալը 31.12.2000թ. դրությամբ կազմել է 7000,0 մլն. դրամ՝ տարեսկզբի 8000,0 մլն. դրամի դիմաց:

2000թ. ընթացքում պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունն ըստ ամիսների կազմել է.

Հունվար	42,2060%
Փետրվար	29,8276%
Մարտ	25,5441%
Ապրիլ	21,1022%
Մայիս	18,3934%
Հունիս	18,9972%
Հուլիս	22,8335%
Օգոստոս	23,2189%
Սեպտեմբեր	24,1745%
Հոկտեմբեր	26,2594%
Նոյեմբեր	26,7663%
Դեկտեմբեր	26,7150%

Ներքին պարտքի սպասարկման ծախսերը 2000թ. հունվար-դեկտեմբերին կազմել են 9353,9 մլն. դրամ:

¹ Սույն ենթաբաժնում գետեղված տվյալները տրամադրված են 7.02.2001թ. դրությամբ:

² Արտաքին պարտքի տվյալները հաշվարկված են 31.12.2000թ. ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դոլարի հաշվարկային փոխարժեքով (552,18 դրամ):

Արտաքին պարտք

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքը

	31.12.1999թ.		31.03.2000թ.		30.06.2000թ.		30.09.2000թ.		31.12.2001թ.	
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. դրամ	մլն. ԱՄՆ դոլար	մլն. դրամ	մլն. ԱՄՆ դոլար	մլն. դրամ	մլն. ԱՄՆ դոլար	մլն. դրամ	մլն. ԱՄՆ դոլար	մլն. դրամ
Արտաքին պետական պարտք, ընդամենը	870.314	452.537	848.019	447.423	847.733	464.464	837.315	449.788	858.720	474.168
այդ թվում՝ ՀՀ կառավարության պարտք	632.865	329.071	627.390	331.017	631.273	345.868	629.264	338.028	651.036	359.489
որից՝ բազմակողմանի վարկային ծրագրեր	437.950	227.721	435.661	229.859	439.318	240.698	436.555	234.509	450.289	248.641
երկկողմանի վարկային ծրագրեր	194.915	101.350	191.729	101.158	191.955	105.170	192.709	103.519	200.747	110.848
ՀՀ կենտրոնական բանկի պարտք	201.231	104.634	193.305	101.989	187.792	102.889	178.245	95.750	175.453	96.882
Վարկեր՝ տրամադրված ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ երաշխիքներով	29.736	15.462	19.536	10.308	19.536	10.704	18.336	9.849	18.336	10.125
Հատուկ ծրագրեր	6.482	3.370	7.788	4.109	9.132	5.003	11.470	6.161	13.895	7.672

ՀՀ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ 1999թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ նվազել է 11,594 մլն. ԱՄՆ դոլարով: Միաժամանակ, 2000թ. ընթացքում ստացվել են վարկեր 49,069 մլն. ԱՄՆ դոլարի չափով և մարվել՝ 34,976 մլն. ԱՄՆ դոլարի չափով: Նշված տարբերությունը պայմանավորված է 1 SDR /1 USD փոխարժեքների տատանումներով:

Արտաքին պարտքի սպասարկման ծախսերը 2000թ. հունվար-դեկտեմբերին կազմել են 4568,6 մլն. դրամ: